Սերգեյ Դովլաթով

Մերոնք

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Մեր նախահայր Մովսեսը Սուխովո գյուղից էր: Հրեա եւ գյուղացի. սա, պետք է ասել, բավական հազվադեպ համադրություն է: Հեռավոր Արևելքում, սակայն, պատահում էր: Մովսեսի որդի Իսահակն արդեն քաղաքում էր ապրում: Ասել է թե՝ վերականգնել էր իրադարձությունների բնականոն ընթացքը: Սկզբում Իսահակն ապրել է Խարբինում, որտեղ էլ ծնվել է հայրս: Հետո բնակություն է հաստատել Վլադիվոստոկի կենտրոնական փողոցներից մեկում: Սկզբում Իսահակ պապս զբաղվել է ժամացույցների ու կենցաղային այլ իրերի վերանորոգմամբ: Հետո որոշ ժամանակ զբաղվել է տպագրական գործով: Էջկապ էր, եթե չեմ սխալվում: Իսկ երկու տարի հետո խորտկարան է գնում Սվետլանկա թաղամասում: Խորտկարանի հարևանությամբ Զամարաևի «Նեկտար, բալզամ» գինու խանութն էր: Պապս հաճախ էր լինում Զամարաևի մոտ: Բարեկամաբար խմում ու փիլիսոփայական զրույցներ էին վարում: Հետո գնում էին պապիս խորտկարանը՝ ուտելու: Հետո նորից վերադառնում էին Զամարաևի մոտ...

— Մեծ հոգու տեր տղամարդ ես, — սիրում էր կրկնել Զամարաեւը, — չնայած որ ջհուդ ես:

— Հորս կողմից եմ միայն ջհուդ, — ասում էր պապս, — մորս կողմից նիդերլան եմ:

— Էլ ով դիմանա՞, — զոհունակությամբ ասում էր Զամարաևը: Մի տարում հաջողացնում են խմել գինու խանութն ու ուտել խորտկարանը: Ծերացած Զամարաևը մեկնում է որդիների մոտ՝ Եկատերինբուրգ: Իսկ պապս գնում է պատերազմ: Ռուս-ճապոնական պատերազմն էր սկսվել: Բանակային ստուգայցերից մեկի ժամանակ նրան նկատում է կայսրը: Պապիս հասակը մոտ յոթ ոտնաչափ էր. խնձորը մի բերան էր անում, բեղերը հասնում էին ուսադիրներին: Կայսրը մոտենում է պապիս ու, ժպտալով, մատը դնում է նրա կրծքին: Պապիս անմիջապես փոխադրում են գվարդիա: Այստեղ նա, երևի թե, միակ սեմիթն էր: Նրան կցում են հրետանային մարտկոցին: Երբ ձիերն ուժասպառ էին լինում, պապս էր ճահիճների միջից դուրս քաշում հրանոթը: Մի անգամ մարտի ժամանակ պապս միանում է գրոհողներին: Մարտկոցը պետք է կրակով օգներ սրանց: Սակայն թնդանոթները լուռ էին: Պարզվում է, պապիս թիկունքը փակել էր հրետանավորների տեսադաշտը, հետն էլ՝ հակառակորդի ամրությունները:

Ռազմաճակատից պապս վերադառնում է երեք գծանի հրացանով ու մի քանի մեդալով: Ս . Գեորգի խաչ էլ, կարծես թե, կար: Ուղիղ մեկ շաբաթ խմում է: Հետո աշխատանքի է տեղավորվում «Էդեմ» հաստատությունում՝ որպես ավագ մատուցող: Մի օր վիճաբանություն է սարքում մատուցողներից մեկի հետ: Սա ինչ-որ բան դանդաղ կամ փնթի էր արել: Պապս սկսում է գոռալ: Բռունցքը խփում է սեղանին: Այն հայտնվում է սեղանի զգրոցում: Պապս տանել չէր կարողանում անկարգությունները: Այդ պատճառով էլ բացասաբար ընդունեց հեղափոխությունը: Ավելին՝ ինչ-որ չափով դանդաղեցրեց հեղափոխության ընթացքը:

Այդպես է եղել: Ծայրամասերի ժողովրդական զանգվածները հեղեղում են քաղաքի կենտրոնը: Պապս կարծում էր, թե հրեաների հերթական ջարդն է: Վերցնում է հրացանն ու բարձրանում տանիք: Երբ զանգվածները մոտենում են, պապս սկսում է կրակել: Նա Վլադիվոստոկի միակ բնակիչն էր, որ դիմադրել էր հեղափոխությանը: Հաղթանակը, այնուամենայնիվ, բաժին է հասնում հեղափոխությանը: Ժողովրդական զանգվածներն արդեն անարգել գրավում են քաղաքի կենտրոնը: Հեղափոխությունից հետո պապս ընկճվում-խաղաղվում է: Դառնում է նույն համեստ արհեստավորը: Ժամանակ առ ժամանակ, սակայն,

հիշեցնում է իր մասին: Մի անգամ, օրինակ, պապս ոտնահարում է ամերիկյան «Մերխեր, Մերխեր եւ Ընկ . » ընկերության հեղինակությունը: Ամերիկյան այս ընկերությունը Խաղաղ օվկիանոսով Հեռավոր Արեւելք էր բերել ծալովի մահճակալներ: Թեեւ այդ անվանումն ավելի ուշ է ծնվել: Այն տարիներին դա արտառոց մի նորույթ էր: Կոչվում էր «Մեջիք բեդ»: Այն օրերի ծալովի մահճակալը գրեթե չէր տարբերվում իր ժամանակակից տարբերակից: Գունավոր բրեզենտ, զսպանակներ, ալյումինե հնոց . . . Առաջընթաց ջատագով պապս գնում է հանրախանութ: Մահճակալը դրված է լինում հատուկ բարձրահարթակի վրա:

— Ամերիկյան ընկերությունը ներկայացնում է նորույթ, — ձայնում է վաճառողը: — Ամուրիի երազանք: Ճանապարհորդի անփոխարինելի ընկեր: Հարմարավետություն ու գրգանք: Ցանկանո՞ւմ եք փորձել:

— Ցանկանում եմ, — ասում է պապս:

Ու, կոշիկները՝ առանց քուղերն արձակելու, հանելով, պառկում է: Ինչ-որ ճայթյուն է լսվում, վնգստում են զսպանակները: Պապս հայտնվում է հատակին: Վաճառողը, սիրալիր ժպիտը դեմքին, բացում է մեկ այլ մահճակալ: Նույն ձայներն ու նույն արդյունքը: Պապս, քթի տակ հայհոյելով, մեջքն է տրորում: Վաճառողը բացում է երրորդ ծալովի մահճակալը: Այս անգամ զսպանակները դիմանում են: Անձայն ճկվում են, սակայն, ալյումինե ոտքերը: Պապս կրկին հայտնվում է հատակին՝ այս անգամ դանդաղ ու անցավ: Շուտով ամբողջ դահլիճը լցվում է խեղված հրաշք-մահճակալներով: Անօգնական ճռճվում են բրեզենտի լաթերը: Խեղճացած փայլում են ծռմռված ալյումինե խողովակները: Պապս, այդ ընթացքում, սակարկելով գնում է մի բուտերբրոդ ու ծամելով հեռանում: Ամերիկյան ընկերության հեղինակությունը ոտնահարված էր: Այս դեպքից հետո «Մերխեր, Մերխեր և Ընկ.»–ը զբաղվել է զուտ բյուրեղապակյա ջահերի առևտրով...

Իսահակ պապս չափազանց շատ էր ուտում: Բոքոն հացը ոչ թե լայնքով էր կտրում, այլ երկայնքով: Հյուր գնալիս Ռայա տատս միշտ ամաչում էր նրա փոխարեն: Հյուր գնալուց առաջ պապս կուշտ ճաշում էր: Դա էլ չէր օգնում: Հացը զույգ կտորներով էր ուտում: Օղին կրեմ-սոդայի բաժակով էր խմում: Երբ

մատուցում էին անուշեղենը, խնդրում էր, որ չտանեն դոնդողածածկ ձուկը: Տուն վերադառնալով, խոնջացած ընթրում էր...

Պապս երեք որդի ուներ: Կրտսերը՝ Լեոպոլդը, դեռ պատանի էր, երբ մեկնեց Չինաստան: Այնտեղից՝ Բելգիա: Նրա մասին առանձին կպատմեմ: Ավագներին՝ Միքայելին ու Դոնաթին, հրապուրում էր արվեստը: Սրանք լքում են գավառական Վլադիվոստոկը: Հիմնավորվում են Լենինգրադում: Հետագայում այստեղ են գալիս նաև պապս ու տատս: Որդիներն ամուսնանում են: Պապիս կողքին նրանք նվազ ու անօգնական տեսք ունեին: Երկու հարսներն էլ անտարբեր չէին պապիս նկատմամբ:

Աշխատում էր որպես բնակշահագործման գրասենյակի պետ, կամ նման մի բան: Աշխատանքից հետո ժամացույցներ ու էլեկտրական սալիկներ էր վերանորոգում: Առաջվա նման անսովոր ուժի տեր էր: Մի անգամ Շչերբակովի նրբանցքում մի բեռնատարի վարորդ կոպտում է նրան: Հայհոյանքը վիրավորում է պապիս ազգային արժանապատվությունը («ջհուդի մռութ», կամ դրա պես մի բան): Պապս բռնում է մեքենայի թափքից: Կանգնեցնում է մեկուկես տոննայանոց բեռնատարը: Վարորդին դուրս է շպրտում խցիկից: Գետնից պոկում է բեռնատարը: Շրջելով այն, կանգնեցնում է փողոցի լայնքով: Բեռնատարի քիթը հպվում է բաղնիքի պատին: Թափքի ետնամասը՝ Շչերբակովյան պուրակի ցանկապատին: Վարորդը, գիտակցելով կատարվածը, արտասվում է: Լացը ժամանակ առ ժամանակ ընդմիջվում է սպառնալիքներով:

— Գլուխդ թոցնելու եմ, — ասում է վարորդը:

— Փորձի՛ր, — պատասխանում է պապս:

Բեռնատարն այդպես կանգնած մնում է երկու օր: Հետո վերամբար կռունկ են բերում . . . .

— Ինչո՞ւ պարզապես քիթ-մոթին չհասցրիր, — հարցրել էր հայրս:

Մի պահ մտածելուց հետո պապս ասել էր .

— Բա որ շատ ուժեղ ստացվե՞ր . . .

Արդեն ասել եմ, որ պապիս կրտսեր որդին՝ Լեոպոլդը, հայտնվել էր Բելգիայում: Մի անգամ նրա մոտից մարդ էր եկել: Անունը Մոնյա: Մոնյան պապիս համար սմոկինգ էր բերել ու փչովի ընձուղտ: Պարզվեց, որ ընձուղտը գլխարկների կախիչ էր: Մոնյան հայհոյեց կապիտալիզմը, հիացավ սոցիալիստական արդյունաբերությամբ, հետո վերադարձավ Բելգիա: Պապիս շուտով ձերբակալեցին՝ որպես բելգիական լրտեսի: Տասը տարի տվեցին: Տասը տարի՝ առանց նամակագրության իրավունքի: Դա նշանակում էր՝ գնդակահարություն . . . Նա չէր էլ դիմանա այնտեղ: Առողջ տղամարդիկ ծանր են տանում սովը: Իսկ ավելի ծանր՝ կամայականությունն ու անպատկառությունը . . .

Քսան տարի անց հայրս սկսեց զբաղվել նրա արդարացման հարցով: Պապիս արդարացրին, քանի որ բացակա էր հանցակազմը: Հարց է առաջանում . հապա ի՞նչն էր ներկա: Ինչո՞ւ ընդհատեցին այդ անհեթեթ ու զվարճալի կյանքը:

Ես պապիս հաճախ եմ հիշում, թեեւ ծանոթ չեմ եղել:

Ընկերս, ասենք, զարմանում է .

— Ինչպե՞ս ես կարողանում ռոմը թեյի բաժակով խմել:

Անմիջապես պապիս եմ հիշում:

Կամ կինս է ասում .

— Երեկոյան հրավիրված ենք Դոմբրովսկիների մոտ՝ խնջույքի: Դու պետք է նախապես ճաշես:

Եւ կրկին այդ մարդուն եմ հիշում: Բանտում էլ նրան հիշել եմ . . .

Ես պահել եմ պապիս լուսանկարներից մի քանիսը: Թոռներս շփոթելու են մեզ . . .

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Մորական պապս շատ խիստ բնավորության տեր էր: Նույնիսկ Կովկասում նրան դյուրաբորբոք մարդ էին համարում: Նրա հայացքից կինն ու երեխաները սկված դողում էին: Երբ պապիս որևէ բան դուր չէր գալիս, նա խոժոռում էր հոնքերն ու բամբ ձայնով գոռում. ԱԲԱՆԱՄԱՏ: Այս խորհրդավոր բառը տառացիորեն սահմռկեցնում էր շրջապատի մարդկանց:

Անմեկին մի սոսկում էր պատում բոլորին:

— ԱԲԱՆԱՄԱՏ, — գոռում էր պապս: Եվ տունը սկվում էր քար լռության մեջ:

Մայրս այդպես էլ չիմացավ այդ բառի նշանակությունը: Ես էլ երկար ժամանակ չէի հասկանում: Բայց երբ ընդունվեցի համալսարան, անսպասելիորեն գուշակեցի: Մորս, սակայն, ոչինչ չասացի: Ինչո՞ւ ասեի...

Պապիս ծանր բնավորությունը, ինձ թվում է, յուրահատուկ դաստիարակության արդյունք էր: Երբ երեխա էր, գյուղացի հայրը նրան ծղանով էր ծեծում: Մի անգամ երկու ժամ պահել է լքված ջրհորում: Հետո մի կտոր պանիր ու կես շիշ նապարեուլի է իջեցրել: Եվ դրանից մի ժամ հետո միայն դուրս է քաշել պապիս՝ թրջված ու հարբած...

Գուցե այդ պատճառով էր պապս այդքան կոպիտ ու դյուրաբորբոք: Բարձրահասակ էր, նրբագեղ ու հպարտ: Գործակատար էր Էպշտեյնի պատրաստի հագուստեղենի խանութում: Իսկ ծերության տարիներին այդ խանութի համատերն էր: Պապս, կրկնում եմ, գեղեցիկ տղամարդ էր: Նրա տան դիմաց ապրում էր Չիկվաիձե իշխանների բազմանդամ ընտանիքը: Երբ պապս անցնում էր փողոցով, դեռատի Էթերի, Նանա և Գալաթեա Չիկվաիձեները կախվում էին լուսամուտներից:

Ամբողջ ընտանիքն անխոս ենթարկվում էր պապիս: Ինքը ոչ ոքի չէր ենթարկվում: Երկնային ուժերը ներառյալ: Աստծո հետ պապիս մենամարտերից մեկն ավարտվել է ոչ ոքի: Թիֆլիսում երկրաշարժ էր սպասվում: Արդեն այն ժամանակ կային օդերևութաբանական կենտրոններ: Բացի դրանից, կային ամենատարբեր ժողովրդական նախանշաններ: Հոգևորականները շրջում էին տնետուն ու տեղեկացնում բնակչությանը: Թիֆլիսի բնակիչները հեռանում էին

իրենց բնակարաններից՝ հետները տանելով արժեքավոր իրերը: Շատերն ընդհանրապես մեկնում էին քաղաքից: Քաղաքում մնացածները խարույկ էին վառում հրապարակներում: Հարուստ թաղամասերն ազատ ասպարեզ էին դարձել թալանչիների համար: Տանում էին կահույքը, ամանեղենը, վառելափայտը: Ամբողջ Թիֆլիսում միայն մի տան պատուհաններն էին վառ լուսավորված: Ավելի ճիշտ՝ այդ տան սենյակներից մեկի: Դա պապիս առանձնասենյակն էր: Նա չէր կամեցել հեռանալ իր տնից: Ազգականները փորձել էին համոզել նրան, սակայն՝ ապարդյուն:

— Ստեփան, ախր կմեռնես, — ասել էին ազգականները:

Պապս մռայլվել էր, ապա խոժոռ ու հանդիսավոր ձայնով ասել.

— Քաքել եմ դիփունքիդ գլխի՛ն:

Տատս երեխաներին տանում է տնից՝ վերցնելով արժեքավոր ու անհրաժեշտ ամեն բան: Նույնիսկ շանն ու թութակին: Երկրաշարժը սկսվում է վաղ առավոտյան: Առաջին իսկ ցնցումից փլվում է ջրմուղ աշտարակը: Հաջորդ տասը րոպեի ընթացքում խորտակվում են հարյուրավոր տներ: Քաղաքը պարուրում են արեւից շիկնած փոշու ամպերը: Վերջապես ցնցումները դադարում են: Տատս գլխապատառ վազում է տուն: Օլգինսկայա փողոցից սոսկ ծխացող փլատակներ են մնացած լինում: Դրանց մոտ՝ ողբացող կանայք, կլանչող շներ: Վաղորդյան գունար երկնքում չարագույժ կոկոռցով պտտելիս են լինում ագռավները: Մեր տունը փլված է լինում: Դրա տեղում տատս տեսնում է աղյուսների ու տախտակների փոշեծածկ մի կույտ: Եվ այդ ավերակի կենտրոնում՝ պապիս, իր բազկաթոռում: Պապս ննջելիս է լինում: Գոգին՝ լրագիր, ոտքերի մոտ՝ մի շիշ գինի:

— Ստեփան, — ասում է տատս, — Աստված մեզ պատժել է մեր մեղքերի համար: Նա ավերել է մեր տունը . . .

Պապս բացում է աչքերը, նայում ժամացույցին, ափերն իրար զարկում ու հրամայում .

— Նախաճա՛շը:

— Աստված անօթեւան է թողել մեզ, — շարունակում է ողբալ տատս:

— Է՜էհ, — ասում է պապս: Հետո հաշվում է երեխաներին:

— Ի՞նչ ենք անելու, Ստեփան: Ո՞վ է մեզ օթեւան տալու:

Պապս բարկանում է:

— Աստված մեզ տանիքից է զրկել, — ասում է, — իսկ դու զրկում ես ուտելիքից . . . Կապրենք Բեգլար Ֆոմիչի տանը: Ես նրա որդիների քավորն եմ: Մեծն ավազակ դարձավ . . . Բեգլարը լավ մարդ է: Ափսոս, որ գինուն ջուր է խառնում:

— Աստված ողորմած է, — շշնջում է տատս: Պապս մռայլվում, հոնքերը խոժոռում է: Հետո խրատական առոգանությամբ ու հատ-հատ արտասանում է.

— Ճիշտ չէ: Բայց ողորմած է Բեգլար Ֆոմիչը: Ափսոս, գինուն ջուր է խառնում...

— Աստված նորից կպատժի քեզ, Ստեփան, — վախենում է տատս:

— Քաքել եմ դիփունքիդ գլխին...

Զառամելու հետ նրա բնավորությունն անտանելի է դառնում: Ծանր մահակը ձեռքից բաց չէր թողնում: Ազգականները նրան այլևս իրենց տները չէին հրավիրում, բոլորին ստորացնում էր: Կոպտում էր նույնիսկ իրենից տարիքավորներին . Արևելքում դա խիստ հազվադեպ է պատահում: Նրա հայացքից կանայք վայր էին գցում ափսեները:

Վերջին տարիներին պապս տանից դուրս չէր գալիս: Օրերով նստում էր լուսամուտի մոտ՝ իր բազկաթոռում: Անցնող-դարձողի վրա գոռում էր.

— Ռադդ քաշի, գող-ավազակ: — Ու ամուր սեղմում էր ձեռնափայտի բրոնզե գլխիկը: Պապիս շուրջը գոյացել էր մեկուկես մետր տրամագծով վտանգավոր գոտի: Այդքան էր նրա մահակի երկարությունը...

Հաճախ եմ փորձել հասկանալ, թե ինչու էր պապս այդքան մռայլ: Ի՞նչն էր նրան մարդատյաց դարձրել... Ապահովված մարդ էր: Ներկայանալի արտաքին ու նախանձելի առողջություն ուներ: Չորս զավակ ու սիրող, հավատարիմ կին: Գուցե աշխարհի դրվա՞ծքը նրան դուր չէր գալիս որպես այդպիսին: Ամբողջ դրվածքը կամ դրա առանձին դրսևորումնե՞րը: Ասենք՝ տարվա եղանակների հերթականությունը: Կամ կյանքի ու մահվան հերթափոխի անսասանությունը: Կամ երկրի ձգողականությունը: Կամ ծովի և ցամաքի հակադրությունը: Չեմ կարող ասել...

Պապս մահացել է սոսկալի հանգամանքներում: Աստծու հետ նրա երկրորդ մենամարտը ողբերգական վախճան ունեցավ: Վերջին տասը տարին բազկաթոռից չէր ելնում: Վերջում նույնիսկ մահակը ձեռքը չէր առնում: Միայն խոժոռվում էր... Պապս դարձել էր բնապատկերի առանձնահատկություններից մեկը: Տեղական ճարտարապետության նշանակալի ու տեսարժան մի մաս: Երբեմն նրա ուսերին թառում էին սև ագռավները...

Մեր փողոցը վերջանում էր խորը հեղեղատով: Հատակում փրփրում էր մռայլ գլաքարերը շրջանցող գետակը: Վթարված սայլերի կտորտանքի միջից սպիտակին էին տալիս սատկած ձիերի ոսկորները: Երեխաներին արգելված էր հեղեղատին մոտենալ: Կանայք ասում էին լուսադեմին տուն վերադարձած գինով ամուսիններին .

— Փառք Աստծո: Ես մտածում էի, թե հեղեղատն ես ընկել . . .

Ամառային մի առավոտ պապս հանկարծ ելնում է տեղից: Ելնում ու վստահ քայլքով դուրս է գալիս տնից: Երբ պապս անցնում է փողոցով, ծանրիրան տիկնայք Էթերի, Նանա եւ Գալաթեա Չիկվաիձեները կախվում են լուսամուտից: Բարձրահասակ ու ձիգ, պապս քայլում է շուկայի ուղղությամբ: Բարեւողներին պատասխանի չի արժանացնում: Տանը նրա անհետանալը ուշացումով են նկատում: Ինչպես ուշացումով կնկատեին բարդու, քարի, առվի անհետանալը . . . Պապս կանգ է առնում հեղեղատի եզրին: Մի կողմ է նետում ձեռնափայտը: Տարածում է թեւերը: Ու անում վերջին քայլը . . . Վերջ: Քիչ անց վազելով գալիս է տատս: Հետո՝ հարեւանները: Բարձրաձայն ճչում-լալիս են: Նրանց ողբը դադարում է միայն երեկոյան: Եվ մռայլ գլաքարերը շրջանցող

առվակի երբեք չդադարող խուլ աղմուկի միջից լսվում է պապիս ահարկու ու արհամարհական կանչը .

— ՔԱՔԵԼ ԵՄ ԴԻՓՈՒՆՔԻԴ ԳԼԽԻՆ: ԱԲԱՆԱՄԱՏ